

Փառուբանայ Կեանք

ԱՊՐԻԼԵԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ ՓԱՐԻՉԻ ՄԵՋ

Կիրակի, 19 Ապրիլ 2009-ին, կազմակերպութեամբ Ս. Դ. Գ. Կ. Նազարբեկ Երիտասարդական Միութեան, տեղի ունեցաւ դասախօսութիւն մը, Գ.Բ.Ը.Ս.-ի Փարիզի Ալեք Մանուկեան ակումբի սրահին մէջ:



200-ի մօտ ներկայներուն, գերմանացի պատմաբան Ուլֆ-Կլասկ Կուսթ (Wolfgang Gust), որ ի մասնաւորի հրաւիրուած էր Համալուրկէն, ֆրանսերէն լեզուով ներկայացուց իր հետազոտութիւնները, վերջուած Առաջին Համաշխարհային Պատերազմի, գերմանական դիւաններու արխիւներէն:

Պատմաբանին ուսումնասիրութիւնները կերտուած են Հայոց Յեղասպանութեան եւ գերմանո-թուրք զինեալ գաղտնի համաձայնութեան վրայ:



Պարոն Կուսթ ներկայացուց ՀԱՅ մարդը Օսմանեան կայսրութեան մէջ: Թէ ինչպիսի անհրաւորութիւններու զոհ էր ան: Ան խօսեցաւ ընկերային անհասարակութիւններու եւ մարդկային արժեքներու ոտնակոխումներու մասին: Չարագացումներ, որոնք հող կը պատրաստէին ատելութեան մը, որ պիտի անցնէր ընդունելիին սահմանները: Ան, համառօտ նկարագրեց Մասնայ պատմութիւնը, Չեյթանի ինքնապաշտպանութիւնը, Օսմանեան Սահմանադրութիւնը, Ատանայի ջարդերը: Դասախօսքը անդադարձաւ նաեւ հանրաժանօթ Յովհաննէս Լեւոնիսի աշխատանքներուն եւ անոնց մէջ տեղ գտած բացթողումներուն, կամայ թէ ակամայ, ինչպէս նաեւ այդ ժամանակաշրջանի գերմանական եւ անտարանչական շահերը ապահովելու նպատակով եղած վերլուծումներուն, որոնք կ'ընդգրկէին որոշ տարբերութիւններ գերմանացի բարձրաստիճան պաշտօնակատարներու ականատեսի վկայութիւններէն:

Հեռագիրներու հսկայ ցանկ մը գոյութիւն ունի այս արխիւներուն մէջ, ուր Արեւմտահայաստանի տարբեր շրջաններու մէջ գործող հիւլապատուներ եւ հիւլապատարանի պաշտօնեաներ ամենօրեայ դրութեամբ կը տեղեկացնէին գերմանական արտաքին գործոց նախարարութեան: Գերմանիա տեղեկեալ էր պատահածէ: Կարելիութիւնը եւ պարտականութիւնը ունէր զայն կանխելու եւ կամ կասեցնելու եւ կամ արգիլելու:

Մէկուկէս ժամ տեւող դասախօսութենէն ետք, ներկայներուն արիթ տրուեցաւ հարցումներ ուղղելու պատմաբանին: Ան, բոլոր հարցումներուն պատասխանեց եւ տուաւ յաւելեալ լուսաբանութիւն:

Ուլֆկլասկ Կուսթ ասարտեց իր ելոյթը հաստատելով, թէ իր աշխատանքներուն նպատակը Թուրքիոյ յանցանքը նուազեցնել չէ, այլ՝ իրականութեան բացայայտումը: Յերեկոյթը ասարտեցաւ ընդունելութեամբ մը:

ՊՈԼԻՍԸ ՄԵՋ ՀԱՄԱՐ ՊԱՀԱԾ ԲԱՆԵՐ ԴԵՌ ՇԱՏ ՈՒՆԻ

- Պր. Եւրի Կաչատրեան, աւելի ճշգրիտ՝ պատկան բարձր ատենի որոշումով ամբարձրուած կամ վերակնքուած՝ Երուանդ Տեր Կաչատրեան, օրերս մեր խմբագրութիւն ստացած ստամպուկահայ թերթերից տեղեկացանք, որ վերջերս եղել էք Ստամպուկում Չահրատի նոր գրքի շնորհահանդէսին մասնակցելու... Ձեր տպաւորութիւնները, խոհերը:

- Պոլիս մեկնեցի Չահրատի ընտանիքի հրաւերով (ես միշտ Կ. Պոլիս եմ ասում ու գրում, լեզուս չի բռնում այլ անուն ասելու): «Արաս» հրատարակչութիւնը, որ 2006 թուականին լոյս է ընծայել Չահրատի ամբողջական երկերի շքեղ երկհատորեանը, հիմա տպագրել է Չահրատի անտիպ բանաստեղծութիւնների ժողովածուն: Գիրքը հրատարակութեան էր պատրաստել ինքը՝ Չահրատը, բայց, աւարդ, չտեսաւ այն: Գիրքը լոյս տեսաւ օրերս, եւ Չահրատի տիկնոջ Անայիս Եալուզգճեանի հրաւերով մեկնեցի Պոլիս գրքի շնորհահանդէսին մասնակցելու:

Մարտի 18-ին Ֆերիզիւղի Ս. Վարդանանց եկեղեցուն յարակից, «Նազար Շիրիսուլու» սրահի մէջ տեղի ունեցաւ Չահրատի ծննդեան 85-ամեակի եւ մահուան երկրորդ տարեկիցի առթիւ կազմակերպուած հանդիսաւոր երեկոյթ: Միեւնոյն ժամանակ կայացաւ նաեւ Չահրատի նորատիպ գրքի «Դրումի Համ» խորագրով ժողովածուի շնորհահանդէսը: Երեւանում մեր վերջին հանդիպման ժամանակ Չահրատի հարցրի, թէ ինչպէս պիտի խորագրի իր նոր գիրքը, ասաց. «Դրումի Համ: Այս տարիքին գրուած բանաստեղծութիւնները դրումի համի կ'ըլլան»:

Հանդիսութեան ներկայ էին Պոլիսի մեր համայնքի նշանաւոր գործիչներ, հոգեւորականներ, գրական ու մշակութային յայտնի դէմքեր: Հանդիսութեանը մասնակցելու համար Հայլէպից հրաւիրուած էր նաեւ մի գրասեր տիկին, որին ես բնաւ ծանօթ չէի: Առաջինը հալէպցի տիկինը կարողաց իր գրութիւնը՝ նուիրուած Չահրատին: Իր կերպերածայն ելոյթը ինձ յիշեցրեց մեր գիւղական որոշ դպրոցների հանդէսները: Ես այն կարծիքին եմ, որ Չահրատի պոեզիան կարիք չունի ասումնաբանների յաւելեալ կեծի յուզականութեանը, դա այրական պոեզիա է: Ես յօդած էի գրել, «Դրումի Համ» գրքի մասին, որը նոյն օրը լոյս տեսաւ «Ժամանակ» լրագրում: Հանդիսութեանը ես նույնպէս խօսք ասացի, որն, անշուշտ, յօդուածի խօսքը չէր:


- Գիրքը, որ պոլսահայութիւնը գուրգուրալից սեր է տածում Չահրատի հանդէպ, այս անգամ ինչպէ՞ս էր դա արտայայտուում:

- Հրաշալի դահլիճ էր, մարդիկ լսում էին յուզումով ու ուշադրութեամբ: Ես այն տպաւորութիւնը կարելի էր ստանալ, թէ դահլիճում բոլորն էլ Չահրատի անծանօթ բարեկամներն ու մտերիմներն էին:

Այլուհետեւ, ինչպէս լինում է, եղաւ գեղարուեստական մաս՝ Չահրատի բանաստեղծութիւնների հիման վրայ գրուած երաժշտութիւն, գեղեցիկ ասմունք, մանաւանդ յուզիչ ու տպաւորիչ էր Կեղրոնական վարժարանի սան Սարին Աբբաշի արտասանութիւնը: Ծշմարիտ բանաստեղծութեան եւ բարձր մշակոյթի ոգի ու շունչ կար օրուայ հանդիսութեան մէջ: Դրա համար բոլորս պարտ էինք, անշուշտ,

Չահրատի բանաստեղծութեանը եւ, մանաւանդ, տիկին Անայիսի ջանքերին:

Ի դէպ, Չահրատին նուիրուած հանդիսութեամբ Չահրատի օրերը չվերջացան. ամէն օր մտերմական հաւաքոյթներ եղան հանդիսութեան մասնակիցների եւ Չահրատի բարեկամների ու մտերիմների եւ, անշուշտ, տիկին Անայիսի ներկայութեամբ: Այդ ջերմ երեկոները, որ դառնում էին գրականութեան եւ մշակոյթի շուրջ հետաքրքիր խօսք ու գրոյցի երեկոներ, շարունակուեցին մինչեւ իմ վերադարձը: Բոլորն էլ գրքի ու մշակոյթի մարդիկ՝ միշտ ժպիտով ու հումորով լեցուն Էդուարդ Թովմասեանն ու իր տիկինը, «Արասի» շունչն ու ոգին Փայլիւն Թովմասեանը, Չահրատի վերջին գրքերի կազմող, հայ գրքի մշակ Արտաշէս Մարկոսեանն ու իր տիկինը՝ նշանաւոր Կեղրոնական վարժարանի տնօրէն Սիլվա Մարկոսեանը, Հայաստանին, իրենց հայութեանը, հայ գրքին ու մշակոյթին գլխովին նուիրուած:



Բիւզանդ ու Մարի Աբբաշները, գրականագետ Մարկ Նշանեանը, հիանալի երգչուհի Ալիս Մանուկեանը եւ իր ամուսինը՝ տնտեսագիտութեան պրոֆեսոր Արմեն Մանուկեանը, նոյնքան հիանալի ամուսնուրդ տիկին Սիլվա Կոմիլեանը, ուրիշներ՝ բոլորն էլ լուսաւոր ու պայծառ մարդիկ...:

- Մենք իմացել ենք, որ հրատարակութեան էք պատրաստում Ինտրայի ամբողջական երկերը...:

- Ճիշդն ասած, Պոլիս էի մեկնել մէջս ունենալով նաեւ այդ նպատակը: Բանն այն է, որ, «Սարգիս Կաչենց» եւ «Փրինթիսֆօ» հրատարակչութիւնների պատւերով եւ կազմել եմ մեր գրականութեան նշանաւոր դէմքերից մէկի կեանքում, եւ գրականութեան մէջ էլ, որբերգական ճակատագիր ունեցած Տիրան Զրաբեան-Ինտրայի ամբողջական ժողովածուն: Ինտրան ոչնչացրել է իր արխիւը, մնացել է այն, ինչ ժամանակին տպագրուել է մամուլի էջերում: Մինչեւ հիմա դրանք ամբողջութեամբ չեն մեկտեղուել որեւէ գրքում: Կարծում եմ, որ այս նոր ժողովածուն պետք է լինի ամբողջական: Գիտենք, որ Ինտրան նաեւ ընտիր նկարիչ էր, յայտնի է Այվազովսկու բարձր կարծիքը իր նկարների մասին: Որոշեցի որոնել-գտնել եւ այդ գրքում հրապարակել Ինտրայի պահպանուած նկարչական գործերը նոյն-



Չահրատի շիրմաքարը (Շիշլիի ազգային գերեզմանատուն, քանդակագործ Էրոյ Սարաֆեան)

պէս: Ցաւօք սրտի, իր նկարչական գործերը նոյնպէս չեն պահպանուել: Աւելի ճիշդ, պահպանուել են յատուկէտ գործեր: Մէկ փոքրադիր ծովանկար կայ Լիբանանում, որ Եգիպտոսից է հասել Պէյրութ: Ես հինգ տարի առաջ բերել եմ այդ կտաւի սլալոյթ: Տեղեկութիւն կայ, որ Պոլսում մասնաւոր հաւաքածուներում կայ Ինտրայի իւրանկար չորս կտաւ, բայց Պոլսի հայ արուեստի փայլուն գիտնականը այդ մասին ոչինչ չէն ասում, այդ մասին ոչ մի բառ չկայ ոչ Մայտա Սարիսի գրքում եւ ոչ էլ մանաւանդ Կարօ Զիւրքեանի կրթոյցային ու հսկայածաւալ, երկու վիթխարի գրքով հրատարակուած փառայեղ աշխատութեան մէջ: Ստադիոն էի որոնել Ինտրայի այդ չորս գործը: Այդ կատակով հանդիպեցի հռչակաւոր լուսանկարիչ եւ արուեստագետ Արա Կիւլերի, ինչպէս նաեւ այլոց հետ: Բայց սա արդէն այլ պատմութիւն է:

Ուրիշ մի հետաքրքիր բան եմ ուզում պատմել: Ես գիտէի, որ 1890-ական թուականների կէտերին Ինտրան գծանկարներ է արել թուրքական գիտնականի հանդէսի պատուերով, եւ դրանք հանդիւրդ տպագրել է, ինչպէս նաեւ ծեսաւորել է թուրք մի գիտնականի գիտական կի աշխատութիւնը նուիրուած մարդու կազմախօսութեանը: Ի հարկէ, առանց Բիւզանդի դա անհնար էր: Չորս-հինգ օր շարունակ Բիւզանդը համակարգիչի առջեւ նստած՝ ամանկներ էր գրում կամ գանգահարում եւ խօսում էր այս մասին՝ Էլ հայերէն, Էլ թուրքերէն, Էլ անգլերէն... Եւ, ի հարկէ, գտնուեցին հին հանդէսն էլ, հաւաքածուի հասցէներն էլ: Բայց սիւս նոր խոջընդոր մէջտեղ եկաւ. հաւաքածուների տերերը զգալի դրամ էին ուզում պատճենելու թոյլտուութեան համար: Դժուար էր: Բիւզանդի տրամադրութիւնն էլ ընկաւ, բայց շարունակեց իր որոնումները: Նախակերպին օրը եկաւ ուրախ ու աջջայտյով: Դէ, Բիւզանդի գրատուը յայտնի է Ամերիկայից մինչեւ Ճափոն: Եւ հենց Ճափոնի, Թոքիոյի մէջ էլ Բիւզանդը գտել էր թուրքական ամսագրի ամբողջական հաւաքածուն: Տերը, իմանալով, թէ ի՞նչ է հարկաւոր է ինչի՞ համար, սիրայօժար, առանց վարձատրութեան, համակարգիչով Բիւզանդին էր ուղարկել հանդէսը՝ պատճենուած ամբողջութեամբ:

Այսպէս, անսպասելիօրէն ու անակնկալ ձեւով, Ինտրայի գծանկարները Թոքիոյից պիտի հասնէին Երեւան:

Այնպէս, որ հայկական Պոլիսը, դեռ մշակութային շատ հարստութիւն, իմաստաւոր խորհուրդներ եւ ծածկուած գաղտնիքներ ունի մեզ համար:

ՊԱՅՈՒՄԸ ԲԱՌ

Table with 10 columns and 20 rows of numbers for a lottery game.

Պահուած բառը՝ ԵՐԵՎԱՆԻ ԲԺՈՒԹ (5 տատ)
Նախորդին պատասխանը՝ ԿԱՅՄՈՒՌԻԿ

- List of numbers and symbols for the lottery game, including 4, 3, 1, 2, 3, 4, 5, 6, 7, 8, 9, 0, and various symbols.

- List of numbers and symbols for the lottery game, including 3, 4, 5, 6, 7, 8, 9, 0, and various symbols.

ՄԱՒՏՈՔՈՒԿ

Table with 10 columns and 10 rows of numbers for a lottery game.

Հորիզոնական եւ ուղղահայեաց 9 շարքերով եւ սիւնակներով (9x9) կազմուած գծագանգ բաղկացած է իւրաքանչիւր 9 բառաւորով հաշուող 9 բաժնիներով (3x3): Իւրաքանչիւր բառակուսիի մէջ թուանշան մը գետնել այնպէս մը, որ հորիզոնական իւրաքանչիւր շարք, ուղղահայեաց իւրաքանչիւր սիւնակ ունենայ 1-է 9 թուանշանները՝ իւրաքանչիւր թուանշան ՄԵԿ ԱՆՊԱՍ գործածելով: Այսպէս համար կարգ մը թուանշաններ իրենց ճշգրիտ բառակուսիներուն մէջ գետնելու են: